ԳԼՈՒԽ Ա
ՊԱՐՍԻՑ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ՇԱՐՔՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Պարսից թագավորների պատմությունն ու շարքը և նրանց ժամանակը կամենում եմ այստեղ ներկայացնել, բայց չգիտեմ նրանց սկիզբը որտեղից է եղել, քանզի Տրդատի հմուտ քարտուղար լատին[1] Ագաթանգեղոսը և Մեծ Մովսես Խորենացին պարթև Արշակից[2] են դնում նրանց պատմության սկիզբը մինչև Արտևանը[3]: Նրանք ուսուցչաբար են մեզ հաղորդում՝ ճաշակավոր և քաղցր ոճով: Իսկ ես նրանց շարադրանքներից քաղելով կգրեմ այստեղ: Հայտնելով ձեր իմաստությանը, որ ձեր բազմաթիվ գիտությունների հետ ես քիչը կշարադրեմ, որ հետևյալն է:

Ալեքսանդր Մակեդոնացու[4] որդի Եքդանիլից հետո, որ տիրեցին տիեզերքը, նրա չորս դայակորդիները, որ կոչվեցին Անտիոքոս[5], նաև Սելևկիոս[6]: Սա տիրեց պարսիկներին, մարերին, հայերին և կոչվեց Նիկանովր[7]. սա ապրեց երեսունմեկ տարի: Ապա Անտիոքոսը, որ կոչվեց Թևոս: Ալեքսանդրից վաթսունմեկ տարի հետո Արշակ Քաջը քետուրական[8] ծնունդներից սերված, պարթևների ցեղից, քուշանների[9] Բահլ[10] աշխարհից, ելավ բազմաթիվ զորքերով և հալածեց Անտիոքոսին. ոմանք նաև ասում են, թե սպանեց նրան, ինքը տիրեց ամբողջ արևելքը, արյաց (պարսից) երկիրը և հնազանդեցրեց իր իշխանությանը, որ տևեց մինչև երեսուն տարի: Սրանից հետո սրա որդիների որդիները (իշխեցին) բազմաթիվ տարիներ մինչև Արտևանը[11]: Սրա օրերում վերացավ պարսից Արշակունիների թագավորությունը[12]: Մենք այն իր տեղում կպատմենք: Այժմ վերադառնանք մեր խոսքի շարադրանքին: Արշակը ապրելով երեսունմեկ տարի՝ մեռնում է: Արտաշեսը թագավորում է քսանվեց տարի, Արշակը տարիներ... Արշականը երեսուն տարի, Արշակը երեսունմեկ տարի, Արշեյը՝ քսան տարի, Արշավիրը՝ քառասունվեց տարի, Արտաշեսը՝ երեսուներեք տարի, Դարեհը՝ երեսուն տարի, Արտակը՝ տասնինը տարի, Արտաշեսը՝ քսան տարի,

Պերոզը՝ երեսուներեք տարի, Վաղարշը՝ հիսուն տարի, Արտավանը՝ երեսունմեկ տարի: Սրա օրոք Պարսկաստանից վերացավ սրանց թագավորությունը: Մենք կթողնենք այլ տեղում պատմելու, իսկ այժմ կպատմենք հայոց թագավորների կարգավորությունը մինչև Խոսրովը[13]:

ԳԼՈՒԽ Բ
ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԸ

Քանզի, ինչպես ասացինք, Արշակը[14] թագավորելով Արյաց աշխարհի վրա՝ թագավորեցրեց իր եղբայր Վաղարշակին[15] և բազմաթիվ զորքերով ուղարկեց Հայաստան և նրան դարձրեց իր երկրորդը՝ դիմակայելու թշնամիներին: Վաղարշակը մեծ ուժերով եկավ տիրեց Հայաստանին՝ թագավորելով քսաներկու տարի: Արշակը՝ տասներեք տարի, Արտաշեսը՝ քսանյոթ տարի, Տիգրանը՝ երեսուներեք տարի, Արտավազդը՝ տարիներ, Արշամը՝ քսան տարի, Աբգարը՝ երեսունութ տարի, Անան՝ տարիներ, Սանատրուկը՝ երեսուն տարի, Երվանդը՝ քսան տարի, Արտաշեսը՝ քառասուներկու տարի, Արտավազդը՝ տարիներ, Տիրանը՝ քսանմեկ, Տիգրանը քառասուներկու տարի, Վաղարշակը՝ քսան տարի, Խոսրովը՝ տարիներ: Այստեղ դադարեց նաև Հայաստանի Արշակունյաց թագավորությունը առժամանակ[16]: Իսկ Պարսկաստանում բոլորովին դադարեց: Քանզի պարսից թագավորն էր Արտավանը, իսկ ոմն Արտաշիր անունով, որ Ստահրացի Սասանի որդին էր, իրեն միաբանեց Պահլավունիների ամբողջ ցեղը և բազմաթիվ զորքեր առնելով գնաց Արտավանի վրա, սպանեց նրան և ինքը թագավորեց ամբողջ Պարսկաստանի վրա: Այս բանը լսելով՝ հայոց թագավոր Խոսրովը մեծ ցասումով վրեժխնդրությամբ լցվում է իր ազգական Արտավանի արյան համար և առնելով իր զորքերը գնում է Արտաշիրի վրա ու հալածում է նրան մինչև Հնդկաստան, իսկ ինքը ավերում է երկիրը (Պարսկաստան), քանդում, գերում և անմարդաբնակ է դարձնում ամբողջ երկիրը: Տասնմեկ տարի այսպես արեց, մինչև որ ինքն էլ սպանվեց Անակի[17] կողմից, ինչպես որ պատմում է Ագաթանգեղոսը[18]: Իսկ Արտաշիրը տիրում է Հայաստանին մինչև